**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

N 117
*11 մայիս 2018թ.*

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով ՀՀ օրենք<<Տեղական ինքնակառավարման մասին>>ի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ավագանու N15-Ա որոշումը:

X ______________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան*
*032268781*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 15-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 06—ի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով համայնքի մահացածի ընտանիքների անդամների և նորածինի ծնողների դիմումները, ներհամայնքային մարզական միջոցառումների մարզական թիմերի մրցաշարերի արդյունքները, համայնքի Արցախի ազատամարտի և քառօրյա պատերազմի մասնակիցների և զոհվածների ցուցակը.

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Մայիսի 9-ի կապակցությամբ աջակցել Լեռնապատ համայնքի Արցախի ազատամարտի և քառօրյա պատերազմի մասնակիցների և զոհվածների ընտանիքներին՝ համայնքի բյուջեի գործառնական դասակարգման 10 բաժնի 7 խմբի 1 դասի 4729 հոդվածով նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն ընդհամենը՝195 000/հարյուր իննսունհինգ հազ / դրամ համաձայն կից հավելված 1-ի:
2. Աջակցություն ցուցաբերել համայնքի մարզիկներին և մարզական թիմերին՝ ներհամայնքային մարզական միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու , ֆուտբոլի, վոլեյբոլի և նարդու սպորտային մրցաշարերին առաջին և երկրորդ տեղերը գրավելու համար, Լեռնապատ համայնքի բյուջեի 08/01/01/-ի 4727 հոդվածով՝ պարգևատրել՝ընդհամենը 100000 /հարյուր հազար/ դրամ,համաձայն հավելվա 2-ի:
3. Բավարարել Լեռնապատ «Համայնքի մահացածների և նորածինների ընտանիքի անդամների>> դիմումները և համայնքի բյուջեի գործառնական դասակարգման 10 բաժնի 3 խմբի 1 դասի 4726 հոդվածով մահացածների ընտանիքներին տրամադրել սոցիալական օգնություն ընդամենը՝300 000 /երեք հարյուր հազ/ դրամ, իսկ 10 բաժնի 4 խմբի 1 դասի 4729 հոդվածով, նորածինների համար՝ 10000 / տասը հազ/ դրամ՝ համաձայն հավելվածի. 3-ի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ